ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

23-ը օգոստոսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Օգոստոսի 23-ի՝
Հայաստանի Անկախության Հռչակագրի ընդունման օրվա առիթով

Հայաստանի նորանկախ Հանրապետության ստեղծման հիմքում կարևոր ու հիշարժան ամսաթիվ է 1990 թվականի օգոստոսի 23-ը, երբ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում ընդունվեց Հայաստանի Անկախության Հռչակագիրը և սկիզբ դրվեց անկախ Հայաստանի Հանրապետության ձևավորման գործընթացին:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Անկախության Հռչակագրի ընդունման օրվա կապակցությամբ: 34 տարի առաջ՝ դժվարին պայմաններում և պատերազմական իրավիճակում, հաղթեց հայ ազգի գաղափարական միասնությունը, ազատ ու ինքնիշխան հայրենիք ունենալու մեծագույն ցանկությունն ու վճռականությունը: Հռչակագիրը որպես հիմնարար փաստաթուղթ սկիզբ դրեց Հայաստանի նոր կենսագրությանը, որը լի էր բազում բարդություններով, առաջխաղացումներով ու կորուստներով, այդ թվում Արցախի զավթումը:

Անկախության ձեռքբերումը սպասված ու նշանավոր իրադարձություն էր հայության կյանքում, որի պահպանման ու ամրապնդման համար ավագ սերունդների օրինակով պիտի լինենք համախմբված և յուրաքանչյուրս գործենք հանուն ազատ ու անկախ հայրենիքի գոյության, հանուն զարգացող ու անվտանգ երկրի կայացման:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս խորհրդանշական Օգոստոսի 23-ի կապակցությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ